



ՀԱՅՀ ԿԱՐՄԻՐ ԽԱՉ

Ա. Ա. ԲԵՐԵԶԱՆԴ

ԱՌԱՋԻՆ ՈԳԿԱՆԻԹՑՈՒՆ

ԴԺԲԱԼԻՑ ԴԵՊՔԵՐՈՒՄ

ՅԵՎ. ԹՈՒՆԱՎՈՐՎԵԼԻ

ԵԿԱՅՈՒՆ
Института
Ростехнологий
Академии Наук
СССР

ԳԵՂԱՐՔԱ ԹՎՀՐԱՅՐԱԳԻՑ

ՅՈՒՆԱՆ 1983

614

Բ-58

20 JUL 2010

CA 305

614

P-58

Հ Ս Խ Հ ԿԱՐՄԻՐ ԽԱԶ

Ա. Ա. ԲԵՐԼՅԱՆԴ

ԱՌԱՋԻՆ ՈԳՆՈՒԹՅՈՒՆԸ

ԴԺԲԱԽՏ ԴԵՊՔԵՐՈՒՄ

ՅԵՎ ԹՈՒՆԱՎՈՐՎԵԼԻՄ

БИБЛИОТЕКА
ИНСТИТУТА
ВОСТОКОВЕДЕНИЯ
Академии Наук
СССР

ՊԵՏԱՐԱՏ-ԲԺՇՐԱՏ ԲՈՒԺԻՆ

ՅԵՐԵՎԱՆ

1933

0 08 2013

333

ՀԻՄՆԱԿԱՆ ԿԱՆՈՆՆԵՐ, ՎՈՐ ՊԵՏՔ Ե ԿԱՏԱՐԵԼ ԱՌԱՋԻՆ
ՈԳՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՑՆԵԼԻՍ

1. Դժբախս դեպիերում, յերք պահանջվում է բժշկական ոգնություն, ամենից առաջ հարկավոր ե հոգալ, վոր բժիշկ կանչվի: Յեթե բժիշկն իսկույն չի կարող գալ դժբախտության տեղը, հարկավոր ե վնասվածին հասցնել առաջին ոգնություն և անմիջապես ուղարկել նրան մոտակա բուժաբանը:

2. Առաջին ոգնությունը պետք ե հասցնի ամեն մարդ, ով կարող ե անել այդ: Առաջին ոգնությունը պիտի ղեկավարի մի մարդ, մյուսները ոգնում են նրան, գործում են նրա ցուցմունքներով, առանց իբրանցման և անոգութ խորհուրդների:

3

Պետրոսի Տպարան

Գլավլիք № 2027-(1)



Մըբագրեց՝ Ա. Գառարյան

Պատվեր № 3993

Տերած 2000

60896-67

3. Առաջին ոգնությունը հասցնելուց առաջ պետք ե պարզել աղետի բնութիւն ու պատճառը և հեռացնել վնասված վտանգավոր տեղից:

4. Վնասվածին պետք ե պառկեցնել հարմար ու հանդիսադրությամբ:

5. Բացել հագուստի սեղմող մասերը՝ դոսին, ոծիքը և ալին:

6. Մշտապես պետք ե տչքի առաջ ունենալ, վոր անզգությունը անհմուտ գործողություններով վնաս չհասցվի հիվանդին:

7. Վոչ մի ժամանակ վերքը ջրով չլվանալ և արյունահոսությունը դադարեցնելու նպատակով՝ չկեղտոտել վերքը զանգան միջոցներով (սարդուստայնով և ալին):

ԱՐՅՈՒՆԱՀՈՍՈՒԹՅՈՒՆ ԹՇԻՑ ԿԱՄ
ՇՐՅՈՒՆՔԻՑ

1. սեղմել վզի զարկերակը ներքնի ծնոտի ծալրի մոտ (նկ. 1) և պահել այդպես մինչև արյունահոսության դադարելը:

2. Յերբ արյունահոսությունը դադարի, վերքի շուրջը լոդ քսել և կապել:

3. Թշի վրա կտալ դնելու համար ամենից հարմար ե ոգտվել լեռանկրունի գլխակապով (կասինկալով), վորի ծալրերը կտպել գլխի վրա:



ԱՐՅՈՒՆԱՀՈՍՈՒԹՅՈՒՆ ՔԹԻՑ

1. Հիվանդին հստեցնել և տուաջարկել, վոր գլուխը մի քիչ լեռ պահի:
2. Մինչև արյունահոսության դադարումը՝ հիվանդը պիտի խուսափի ամեն տեսակ շարժումներից՝ չփոշտա, քիթը չմաքրի, հանդիսաւու խոր շունչ քաշի:
3. Հաղուստը բացել (ոձիքը, դուին, կապած տեղերը):
4. Սեղմել մատներով քթածակերը 5—20 բոպելով:
5. Քթարմատի և լերեսի վրա դնել ստոն թրջոց, ստուց և տլնի:
6. Արյուն արձակող քթածակը փակել մասկայով կամ պատրուկի ձև տված մաքուր շորի կտորով, տինակես վոր, լերը ար-

ունահոսությունը դադարի,
հեշտ լինի դուրս հանել այս:
Քթածակերի մեջ բաւ-
բակ չի կարելի մտցնել, վորով
հետև նրա կոորները կարող
են մնալ այնտեղ և անցնել
քթի խորքը:

ԱՐՅՈՒՆԱՀՈՍՈՒԹՅՈՒՆ ԿՐՆԱ-
ՏԱԿԻՑ ՅԵԼ ԱՆՐԱԿԻ ՏԱԿԻՑ

1. Սեղմել վորչափ կա-
րելի լեռ ուժեղ անրակի տա-
կի զարկերակը ցած՝ դեպի
առաջին կողը (նկ. 2) և



նկ. 2.

պահել մինչև արյունահոսության դադարումը:


Արյունահոսությունը դադարելուց հետո պետք է վերքի շուրջը
լող քսել և բինտով փաթաթել:

2. կռնատակից արյուն հոսելու դեպքում կտպելու համար
պետք է վերցնել մեկ կտմ յերկու չըացած բինտ և կամ
զլանաձև փաթաթած թաշկինակ, դնել վերքի վրա, իջեցնել ձեռքը
ու հետո փաթաթել ուսը կրծքի վանդակի ուղղությամբ:

ԱՐՅՈՒՆԱՀՈՍՈՒԹՅՈՒՆ ՄԵՋՔԻՑ ԿԱՄ ԿՐԾՔԻՑ

1. Սեղմել արյուն հոսող տեղը մարլալով, կտմ մաքուր թաշ-
կինակով, անձեռնոցիկով, յերեսսրբիչով (նկ. 3) և պահել մինչև
արյունահոսության դադարելը:

2. Յերբ արյունահոսությունը դադարի, լող քսել վերքի շուր-
ջը և կտպել կրծքի վերքը ծածկում են մաքուր մարլիլով և
փաթաթում կտսինկալով, վորի ծալբերը կտպում են մեջքին:



նկ. 3.

Մեջքի վերքը նույնպես ծածկում են մտքուր մտոլալով և կտաղում
կտսինկալով, վորի ծալբերը պնդացնում են կըծքին:

ԱՐՅՈՒՆԱՀՈՍՈՒԹՅՈՒՆ ԶԵՌՔԻ
ԴԱՍՏԱԿԻՑ

1. Բարձրացնել տրյուն
հոսող ձեռքը վերև (նկ. 4):
2. Յերբ տրյունահոսու-
թյունը դադարի, վերքի շուր-
ջը լող քսել և կապել:
3. Ավելի հարմար և
կտպել դաստակը կտսինկա-
լով: Կտսինկան պետք եւ դնել
այնպես, վոր նըա մեջտեղի



Նկ. 4.

Ժային ընկնի դաստակի լեռեր և տպա միուս ծալբերը կապել
ձեռքի շուրջը:

ԱՐՅՈՒՆԱՀՈՍՈՒԹՅՈՒՆ ՆԱԽԱԲԱԶՈՒԿԻՑ

1. ա) Առաջին միջոցը: Մատ-
ներով ամուր սեղմել թևի դար-
կերակը (նկ. 5) չհեռացնելով մտա-
ները մինչև վոր արյունահոսու-
թյունը դադարի, այնուհետև վեր-
քի շուրջը լող քսել և փաթաթել:

բ) Յերկրորդ միջոցը: Ուսից
ցած դնել սեղման լեռեսսըբիչից,
թաշկինակից, թոկից, շատ պինդ
չկապել նըանց ծալբերը, վորոնց



Նկ. 5.

մեջ մտցնել մի կտոր փայտ և զգուշությամբ վոլորել մինչև ամրանալը, արյան դադարելը
(նկ. 6):



նկ. 6.

Նրա մոտ: Նախաբաղուկի վրա սեղման դնել չի կարելի:

2. Վիրավորված նախաբաղուկը պետք է փաթաթել բինտով Բինտի առաջին լերկու ողակները դնում են իրար վրա, իսկ հե-

տադա ողակներն անում են այն ձևով, վոր նրանցից ամեն յեկը ծածկի նախընթացների մի քառորդը:

ԱՐՅՈՒՆԱՀՈՍՈՒԹՅՈՒՆ ՈՒՍԻՑ

1. Արյունահոսության աեղից բարձր ուսի վրա, դնել սեղման՝ Երեսսարբիչից, թոկից և ալն և նրանց ծալրեկը շատ ամուր չպիտի կապել մտցնել նրանց մեջ մի վորե պինդ առարկա (փայտ) և զգուշությամբ վոլորելով, պահել մինչև արյան դադարելը, բայց և ժամից վոչ ավելի (նկ. 7): Սեղմանը դնելուն պես՝ վնասվածին պետք է ուղարկել բժշկի մոտ:

2. Յերբ արյունահոսությունը դադարի, վերքի շուրջը լոդ քսել և հետո փաթաթել

3. Վիրավորված ուսը կտրելի լե փաթաթել բինտով (աես

նախաբազուկի արլունահոսությունը) կամ յերկու կասինկայով։ Մի կասինկան ազատ կապում են վզին, մլուսի ծալքերով ծածկում են ուսը վերքից ցած և հանգուցով կապեւմ են ուսի գրսի կողմում։ Յերկորդ կասինկայի ծալը վերևից մացնում են առաջինի տակը և ամրացնում անգլիական գնդասեղով։ Վիրտվորված դառտակը կամ բազուկը պետք է գնել այդ փաթաթոցի մեջ։

ԱՐՅՈՒՆԱՀՈՍՈՒԹՅՈՒՆ ԿՐՈՒՆԿԻՑ ԿԱՄ ՎՈՏԱՏԱԿԻՑ


1. Վնասված վոտը բարձրացներ
2. Յերբ դադարի արյան հոսումը, վերքի շուրջը լող քսել և փաթաթել

ԱՐՅՈՒՆԱՀՈՍՈՒԹՅՈՒՆ ՄՐՈՒՆՔԻՑ

1. Բարձրացնել վոտը և ազդրի վրա դնել սեղման լերեսորբիչից, թուկից, թաշկինտկից և այլն։ Կապելով իրար սեղմանի ծար-

բերը վոչ շատ ամուր, մացնել նրանց մեջ մի յերկար պինդ առարկա (փայտ) և դանդաղ ու զգուշությամբ վոլորել-ամրացնել մինչեւ արլունը կդադարի (նկ. 7):

Սեղմանը աղդրի վրա 2 ժամից ավելի պահել չի կարելի, այլապես սեղմանից ներքեւ գըտնը վոտի մասը կարող է մահանալ, անզգայանար, Դրա համար ել հարկավոր են իսկուն կանչել բժշկին, կամ



Նկ. 7.

հիվանդին տանել բուժաղան:

Սրունքի վրա չի կարելի սեղման դնել:

Վերքը պետք է բինտով փաթաթել:

2. Բինտի առաջին յերկու ողակներն ընկնում են իրար վրա,
իսկ հետագա ողակներից ամեն մեկը պետք է ծածկի նախընթացի
մեկ քառորդաչափը:

ԱՐՅՈՒՆԱՀՈՍՈՒԹՅՈՒՆ ԱԶԴՐԻՑ

1. Արլունահոսությունը կարելի լե կանգնեցնել յերկու մի-
ջոցով:

ա) Ձեռքի մատներով ամուր սեղմել աճուկը (ոախ) և, չի-
առցնելով մատները՝ պահել մինչև արյան դադարումը (նկ. 8 եջ 19):

00896.67



Նկ. 8 ա.

ԳՐԱԴԱՐԱՆ
ИСТИТУТА
ВОСТОКОВЕДЕНИЯ
Академии Наук
СССР

բ) դնել սեղման արլունահոսութիւն աեղից բարձր (տես «Արլունահոսութիւն սրունքից» (նկ. 7):

2. Յերբ արլունը դադարի, յոդ քսել վերքի շուրջը և փաթաթել:

3. Բինտը պետք ե սկսել փաթաթել ներքեւից և հետզհետե անցնել դեպի վեր: Բինտի առաջին լերկու ողակներն ընկնում են իրար վրա, խակ հետագա ողակներից ամեն մեկը պետք ե ծածկի նախընթացի մեկ քառորդաչափը:

ԱՐՅՈՒՆԱՀՈՍՈՒԹՅՈՒՆ ԱԿԱՆՁԻՑ

2. պառկեցնել ճիվանդին:

2. Դնել արտամին ականջափողի մեջ մառլայի փոքրիկ կտոր, մեջը մի քիչ բամբակ, բայց պինդ յեկ խոր չկոխել ականջի մեջ:

3. Դնել վնասված աեղի վրա ոեղինե պարկ (փուչիկ) սառցով լի:

4. Ճիվանդին բոլորովին հանդիսա թողնել: Ականջը չի կարելի լվանալ:



նկ. 8 բ

ՎՈՍԿՈՐՆԵՐԻ ԿՈՏՐՎԵԼԸ

Վոսկորների կոտրվելն իմացվում ե հետևյալ նշաններից:

1. Զգացվում ե ցավ, կոտրված տեղի շուրջը գուանում ե ուռուցք:

2. Կոտրված մասի վերջավորության աննորմալ շարժունություն, վերջավորությունների կախ ընկած դրություն:

3. Ակներև ջարդվածքի ժամանակ վոսկորի ծալրերը լերեռում ձև դրսից կամ նկատվում են վերքի ներսում:

ՈԳՆՈՒԹՅՈՒՆ ՆԱԽԱԲԱԶՈՒԿԸ ԿՈՏՐՎԵԼՈՒ ԴԵՊՔՈՒՄ

1. Հանել հագուստն սկզբում տուղջ ձեռքից և ապա՝ մսավածք ձեռքից: Ավելի լավ ե հագուստի թևի կարը կտրատել:

2. Դնել չշարժվող փաթաթոց, բեկակալ շինից, ջորդանից (յելօն), փալտից, տախտակից և այլն, վորպեսզի վոսկորի կրտորտանքները անշարժ մնան:

Շիները պիտի լինեն այն չափ լերկար, վոր կարողանան իրենց մեջն առնել լերկու հող (խտղ). մեկը կոտրված տեղից բարձր, մլուսը՝ ցած, արմունկի և դաստակի հողերը:

Նախաբազուկի վրա չշարժվող փաթաթոց դնելու համար ճարկավոր ե կոտրված ձեռքը



Նկ. 9.

թեքել արմունկի հոդով (նկ. 9): Յերկու հոգի պետք ե պահեն կոտրված ձեռքը, թեթև քաշելով բաղուկը դեպի արմունկն ու դաստիլը, իսկ լերը այդ ժամանակ փաթաթում ե ամբողջ ձեռքը բամբակով կամ քուքով (ոակլя), դնում ե շիները և ամուր կապում:

3. Փաթաթած ձեռքը պետք ե կախել ուսից կապով:

4. Հիվանդին իսկույն ուղարկել մոտակա հիվանդանոցը:

Յեթե ջարդվածքը բաց ե, այդ դեպքում պետք ե ի նկատի ունենալ հետեւյալը.

ա) Վերքը չպետք ե լվանալ՝ հարկավոր ե միայն զդուշությամբ վերքի վրայից առնել կեղտը՝ մաքուր դանակով վորը նախապես անհրաժեշտ ե կրակի վրա շիկացնել և ապա հովացնել:

բ) կապել փաթթոցով.

գ) ուժգին ձգել (քաշել) մարմիկ վերջավորությունները, դնել շիները և իսկույն ուղարկել հիվանդին բժշկի մոտ:

Անզգութ ձգելուց կարող ե մեծ վնաս առաջանալ:

ՈԳՆՈՒԹՅՈՒՆ ՈՒՍԸ ԶԱՐԴՎԵԼՈՒ ԴԵՐ- ՔՈՒՄ

1. Հանել հագուստն առաջ տոռղջ
թևից և ապա՝ հիվանդ:

2. Կոտրված՝ ձեռքը ծալել ար-
մունկի հոդով:

Մի մարդ պետք ե կոտրված ձեռքը ձգի դեպի ինքը և ցած, իսկ մի ուրիշը թեթև փաթաթելով վերքը՝ (յեթե կտ վերը) պետք ե ամբողջ ձեռքը չորս կողմից ծածկի բամբակով, քուքով շինի շիները նրանց վրա (նկ. 10). Եթե ներն ամուր սեղմում էն ձեռքին, իսկ ապա մնասված ձեռքի հետ միասին կը քի վանդակին:



նկ. 10 ա. 10 բ'

3. Շիները պետք ե այնքան լերկար լինեն, վոր ընդդրկեն ուսի
և արմունկի հողերը:

4. Հիվանդն իսկույն պիտի ուղարկվի հիվանդանոց:

ՄՐՈՒՔԻ ԶԱՐԴՎԱԾՔԸ

1. Վնասված վոտից վոտնամանը հանել: Ավելի լով ե կոշիկի
ճիտքի կարը կտրատել:

2. Դնել անշարժ փաթթոց շինից, ջորդանից, տախտակներից՝
վորպեսզի վոսկորի կտորտանքն անշարժ մնան:

3. Շիները պիտի լինեն անչափ լերկար, վոր ընդդրկեն ծուռ-
կի և սրունքի հողերը:

4. Փաթթոցը սրունքի վրա դնելու համար ողնողներից մեկը
ձախ ձեռքով բռնում ե կրունկը, իսկ աջով՝ վոտքի թաթը լետելից

և դեպի իրեն ե ձգում հիվանդի վոտը, իսկ լերկորդ ոգնողը
լերկու ձեռքով բռնում ե ազդը և պինդ պահում:

Այդ ժամանակ լերրորդը թեթև փաթաթելով վերքը (լեթե կտ
վերք), ծածկում ե սրունքը բամբակով ու ամրացնում ե շիները:

5. Հիվանդն իսկույն պիտի ուղարկվի մոտիկ հիվանդանոց:

ԱԶԴՐԻ ԶԱՐԴՎԱԾՔԸ

1. Աղատել վնասված վոտը կոշիկից և հագուստից, կտրատե-
լով շալվարը, վարտիքը և կոշիկը:

2. Դնել անշարժ փաթթոց շիներից, ջորդանից և տախտակից,
ըստ վորում պետք ե դնել լերկու շին. մեկը դրսից, վոտի դրսի
կողմով և մյուսը՝ ներսի կողմով:

3. Դրսի շինը պետք ե հասնի մինչև կոնտակը, իսկ ներսի-

Նը՝ մինչև տճուկը (ոճք). ցածրում լերկու շիներն ել պետք ե վոտից
10—15 սանտիմետր լերկար լինեն:

4. Ազդրի վրա անշարժ փաթթոց դնելու համար ոգնողներից
մեկը ձախ ձեռքով բռնում ե կրունկից, իսկ աջով թաթից և ձգում
ե հիվանդի վոտն իրեն և միքիչ դեպի դուրս, մյուս ոգնողն տո-
նում ե հիվանդին թեերի տակից և պահում ե նրա մարմինն ան-
շարժ դրության մեջ, իսկ լերբորդն այդ ժամանակ կտպում ե վեր-
քը (լեթե կա վերք), ամբողջ վոտը ծածկում ե բամբակով, դնում
ե շիները և ամուր կտպում (նկ. 11):

5. Վերևից դրսի շինը պիտի կտպել կրծքին, իսկ վասակած
վոտը շիների հետ միտսին պիտի կտպվի առողջ վոտին:



Նկ. 11 ա.



Նկ. 11 բ.


6. Հիվանդն իսկույն պիտի ուղարկվի մոտիկ հիվանդանոցը պատգարակի վրա կամ սալլով, վորը պիտի ունենա փափուկ վրռվածք (դարձանից, չոր խոտից, զգեստներից, վերմակից, բարձերից):

ՆԵՐՔԵՎԻ ԾՆՈՏԻ ԶՄՐԴՎԱԾՔԸ

1. Դնել փաթթոց շ կասինկալից:
2. Ուղարկել հիվանդին բուժարան:

ԱՆՐԱԿԻ ԶՄՐԴՎԱԾՔԸ

1. Ցերեսսրբիչով կապում են մատսված կողմի ուսը և քաշում



Նկ. 12

են դեպի յետ (նկ. 12), վորից հետո կապելով լերեսսրբիչը, ինչպես լերկում են կարից, ամուր կապում են մրւս ուսի վերին մասում (մի լերը դաշափ): Զեռքերը թեքում են արմունկների մոտ և քիչ լետ քաշում:

Մեջքի և լետ քաշած ձեռքերի մեջ անց են կացնում փայտ և ամրացնում (նկ. 12):

2. Վնասվածին իսկույն պիտի ուղարկել հիվանդանոց:

ԿՈՂԵՐԻ Ի ԶԱՐԴԵՎԱԾՔ

1. Խորը արտաշնչելուց հետո կրծքի վանդակն ամուր կտպել լայն բինառվ։ կարելի է նաև յերեսսրբիչով, կարելով ծալրերը թելով, կամ պնդացնելով անզլիտկան գնդասեղով։
2. Վորպեսզի փաթաթոցը ցած չընկնի, նրա մի քանի ողակները տանում են ուսերի վրալով (Նկ. 17)։
3. Ուժեղ ցավեր զդալիս՝ պետք ե դնել սառցով լի պարկ լրճքի վրա։
4. Հիվանդին խակույն ուղարկել բժշկի մոտ։

ՎՈՍԿՈՐԸ ԴՈՒՐՍ ԸՆԿՆԵԼՈՒ ՆՇԱՆՆԵՐԸ

1. Հողի (խաղ) ձեի փոփոխությունը։
2. Գուրս ընկած վերջավորությունը լինում ե անշարժ։ Զդացվում ե ցավ։ հողն ուռչում է։

30

ԱՌԱՋԻՆ ՈԳՆՈՒԹՅՈՒՆ՝ ՎՈՍԿՈՐԸ ԴՈՒՐՍ ԸՆԿՆԵԼՈՒ ԴԵՊՔՈՒՄ

1. Զպետք ե փորձել վոսկորը տեղը գցել։
2. Հարմար տեղավորել վնասված վերջավորությունը, լեթե ձեռքն ե՝ կախել կասինկայով, լեթե վոտքն ե՝ զնել բարձի վրա, վորը պիտի գտնվի յերկու փափուկ մութաքաների մեջ։
3. Վնասվածին հարմար ձեռվ պառկեցնել պատգարակի վրա և կամ, լեթե կարող ե նստել, նստեցնել սալլի վրա և ուղարկել հիվանդանոց։

ՎՆԱՍՎԱԾԻ ՏԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ

Վնասվածին ավելի լավ ե տանել պատգարակի վրա։ Վորպես վնասվածին ավելի լավ ե տանել պատգարակի վրա։ Հարմարակարակ կարող ե ծառալել սանդուխքը, դռները, ձողեր՝ հարմարեցնել թոկերով և ալին։

31

ԻՆՉՊԵՍ ՊԵՏՔ Ե ԲԱՐՁՐԱՅՆԵԼ ՀԻՎԱՆԴԻՆ ՅԵՎ ՏԵՂԱՎՈՐԵԼ ՊԱՏԳԱ-
ՐԱԿԻ ՎՐԱ ՅԵՎ ԻՆՉՊԵՍ ՊԱՏԳԱՐԱԿԻՑ ՏԵՂԱՓՈԽԵԼ ՍՍՂՃԱՎԱԼԻ ՎՐԱ

1. ծտնը մնասվածին գետնից բարձրացնում են լեռեք հողին
Նրանք կանգնում են հիվանդի մի կողմում։ Մեկը ձեռքը տանում
է ուսի և մեջքի տակը, մյուսը մեջքի և նստատեղի տակը և լեռ-
բորդը ծնկների և սրունքների տակը։

2. Յերեքն ել տված հրամանի համաձայն զգուշությամբ բարձ-
րացնում են հիվանդին և մի քիչ գեպի իրենց զցում նրան։

3. Հետո նույնպես տված հրամանի համաձայն մնասվածին
դանդաղ ու զգուշությամբ իջեցնում են պատգարակի վրա մարմին
առողջ կողմով դեպ վար։


4. Հիվանդին պատգարակի վրա դնելիս կամ իջեցնելիս պետք
ե մնասված մասն առանձին ուշադրությամբ և զգուշությամբ տե-
ղավորել։

ՊԱՏԳԱՐԱԿԻ ՎՐԱ ՏԱՆԵԼՈՒ ՅԵՂԱՆԱԿԸ

1. Հարթ տեղով անցնելիս՝ պետք ե տանել հիվանդին վոտնե-
ռը դեպի առաջ։

2. Սանդուխքներով բարձրացնելիս կամ սար բարձրանալիս՝
պետք ե հիվանդի գլուխն առաջ պահել։

3. Սանդուղքներից կամ սարից իջնելիս՝ հարկավոր ե հիվան-
դին տանել վոտներն առաջ պահած և միայն վոտները կրտրված
դեպքում՝ առաջտրկվում ե սարից կամ սանդուխքներից իջնելիս՝
հիվանդի գլուխն առաջ պահել։



Նկ. 13

4. Պատգարակ տանողները պետք եւ ալնպես զգուշությամբ քալին, վոր ցնցումներ քիչ լինեն:

ՎՆԱԾՎԱԾԻՆ ՏԱՆԵԼՈՒ ԱՅԼ ՑԵՂԱՆԱԿՆԵՐ

1-ին յեղանակը

1. Հիվանդի համար հարմար նստվածք եւ ստացվում, լերը շաջ լակողներն սկզբում բռնելով իրենց ձախ ձեռքով հենց իրենց աձեռքը, հետո բռնում են աջ ձեռքով մլուսի ձախ ձեռքը (14):

2. Նստած դրությամբ տանելը թուլատրվում եւ միայն փոքրիկ տարածությունների համար:

2-րդ յեղանակը

1. Մի տանող մտնում եւ հիվանդի վոտների տրանքը բարձրացնում եւ նրան ծնկներից, իսկ մլուսը վերցնում եւ նրան լե-



Նկ. 14

- առեվից, միացնելով ձեռքերի մատները հիվանդի կրծքի վրա
 2. Զգուշությունը բարձրացնելով՝ շալակողները հանդիստ տա-
 նում են հիվանդին:
 3. Այդ լեզանակով կարելի է տանել հիվանդին, լեթե վոտնե-
 րի կամ կողերի վոսկորները ջարդված չեն:

3-րդ լեզանակը

1. Հիվանդը նստում է գոտուց, լերեսսըրիչից կամ պարանից
 շնած ողակի վրա:
 Յերկու հոգի կանգնում են հիվանդի կողքերում և, բարձրաց-
 նելով ողակը՝ տանում են հիվանդին:
 3. Հիվանդն իր ձեռքերը դնում է տանողների ուսին:

ՄԱՀՎԱՆ ՆՇԱՆՆԵՐԸ

1. Գաղարում ե սրի բարախումը: Յերբ մոտեցնում ենք տկանջը զսասվածի ձախ ծծին, չի լսվում սրտի զարկը Զեռքի ափը սրտի վրա դնելիս՝ նույնպես չի զգացվում բարախումը:
2. Շնչառության գաղարումը: Յերբ մոտեցնում ենք հայելին բերանին, նա չի քրտնում, աղոտանում: մոմի բոցը, վոր մոտեցնում ենք քթին կամ բերանին, չի լերերվում.
3. Մկանների բուլացումը: Բարձրացրած ձեռքն ընկնում ե իրեն:
4. Աչի բիբը չի փոխվում: Լույսը մոտեցնելիս՝ բիբը նեղանում, իսկ մթութան մեջ չի լայնանում:
5. Թելով ձեռքի մատն ամուր կտպելիս՝ չի նկատվում վոչ ջրգողություն և վոչ ել կարմրություն:

6. Դիակի ընդարձացումը: Մահից անմիջապես հետո թուլացած մկանները մի քանի ժամ անցնելուց հետո ընդարձանում, անդգալանում են:

7. Դիակին հատուկ բծեր: Մահից մի քանի ժամ անցած դիակի ցածի մասերում յերեան են գալիս բաց վարդագույն բծեր, վորոնք հետշհետե մեծանում են ու սեանում:

Այն բոլոր դեպքերում, յերբ բացսկայում են այստեղ բերած նեանները, - մենիք զործ ունենի կարծեցյալ մահվան հետ:

ՈԳՆՈՒԹՅՈՒՆ ԿԱՐՄԵՅՅԱԼ ՄԱՀՎԱՆ ԴԵՊՔՈՒՄ

1. Ներս թողնել թարմ ող, հիվանդին շուռ տալ ողի հոսանքի կողմը:
2. Բացել հագուստի սեղմող մասերը (ոճիք, գոտի ժիլետ):

3. Անմիջապես կիրտուել արհեստական շնչառություն (տես հետագա գլուխները):

4. Շփել քունքերը, ձեռքերը, վոտները (սրտի ուղղությամբ) լերեսսբիչով:

5. Հաճախ ստոր ջուր շաղ տալ լերեսին և տմեն անդամ սրբել:


6. Քթին մոտեցնել նաշաղիրի սպիրտ, ողլկոլոն, քացախ, բաց վոչ թե շշի մեջ, այլ ցանելով մի քանի կաթիլ թաշկինակի վրա կամ ձեռքի տփին:

ԱՐԵՍՏԱԿԱՆ ՇՆՉԱՌՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԻՆ ԶԵՎԸ
(Ըստ Սիլվեստրի)

2. Հաղուստից բարձ շինել զլանակի ձևով և դնել հիվանդի մեջքի տակ:

2. Պետք ե հետևել, վոր լեզուն կտխ չընկնի: Ավելի լավ ե բունած պահել լեզուն ձիռքով՝ թաշկինակի կտմ լերեսսբիչի միջոցով:

3. Իշնել ծնկների վրա հիվանդի գլխի վերև, տռնել նրա լեզու ձեռքերն արմունկից քիչ ցած և հաշվելով «մեկ-լեզկու», տռանց շատապելու, բարձրացնել հիվանդի գլխի վերևը և ձգել դեպի ինքը (նկ. 15): Սպասել լերկու վալրկան: Ապա հաշվելով «լերեք»



42

Նկ. 15

չորս, հիվանդի արմունկները դարձնել դեպի մարմինը և մտ 2 վայրկյան սեղմել կողքերին (Նկ. 15):

4. Այդ շարժումները (արմունկների ծալեն ու թեքելը) կը ընկնել հանգիստ ու համաշխատ 15—20 անգամ մի բոպելի մեջ, մինչև հիվանդը կսկսի շնչել, իսկ դա կարող է լինել նույնիսկ մի քանի ժամկց հետո:

5. Կենդանանալուց հետո տաքացնել հիվանդին, լտյն հազցնել և տաք թեյ խմացնել:

ԱՐԵՍՏԱԿԱՆ ՇՆՉԱՌՈՒԹՅԱՆ ՑԵՐԿՐՈՐԴ ԶԵՎԸ

(Բայ Շեֆֆերի)

1. Հիվանդին պառկեցնում են փորի վրա, գլուխը շուռ են տալիս անպես, վոր ըլթն ու բերանն աղատ լինեն:



Նկ. 16

2. Աղատողն իջնում ե ծնկների վրա հիվանդի վերևու ուղղելով լիր ձեռքերը. համաշխատ սեղմում ե ներքին կողերը հաշվելով «մեկ լերկու»:

3. Աղա ոգնություն հասցնողը լետ ե քաշվում, քիչ ուղղվում ե, առանց ձեռքերը հեռացնելու (նկ. 17), 1—2 վալրկան կանգ ե առնում և նորից շարունակում անել այն, ինչ վոր ասված ե 2-րդ կետում:

4. Այդ շարժումներն արվում են 15—20 անգամ մի ըոպելի մեջ, մինչև վոր կվերականգնի բնական շնչառությունը, վոր կարող ե լինել նույնիսկ մի քանի ժամից հետո:

Աղհետական շնչառությունը կարելի լի կիրառել մեր մատնանշած ձևերից, վորով և կամենաք, բացի հետևյալ դեսքերից.
ա) Ձեռքերի վոսկորները ջարդվելուք դեպում՝ արգելվում ե



Նկ. 17


կտաարել արհեստական շնչառութիունն ըստ Սիլվեստրի, պետք ե
միայն ոգտվել Շեֆֆիրի սիստեմով:

բ) Կողերի ջարդվածքի դեպքում չի կարելի դործադրել Շեֆ-
ֆերի սիստեմը, պետք ե ոգտվել միայն Սիլվեստրի յեղանակով:

ՈԳՆՈՒԹՅՈՒՆ ՈՒՇԱԳՆԱՑՈՒՅՑԱՆ ԴԵՊՔՈՒՄ

1. Հիվանդին պառկեցնել այնպես, վոր նրա գլուխը մարմնից
ցած լինի: Բարձրացնել հիվանդի վուճերը (նկ. 18), բացել ոձիքը,
գոտին:

- 2.Ներս թողնել թարմ ողի հոսանք:
3. Դնել հիվանդի ճակատին սառը ջրի մեջ թրջած մաքուր
շորի կտոր:
4. Հոտ քաշել տալ նաշաղդիրի սպիրտ: Յեթե հիվանդն ուշըի



Նկ. 18

չի դա, կատարել արհեստական շնչառություն (տես նախկին գլուխանելը):

5. Տալ գոգոիչ կաթիւներ (20—30 կաթիլ եֆիր·վալերանի):

ՈԳՆՈՒԹՅՈՒՆ ՈՒԳԱՐՈՎ ԲՈՆՎԵԼՈՒ ԴԵՊՔՈՒՄ

1. Անմիջապես մաքրել ողբ բացել պատուհանները, դռները:

2. Հիվանդին տանել ուրիշ սենյակ, վորտեղ ողբ մաքուր ե, իսկ ամտոր գուրս հանել բակը:

3. Գլուխ թրջել սառը ջրով, ճակատին դնել սառը թրջոց: Կուրծքը, լերեսը թրջել սառը ջրով: Նաշադիրի սպիրտ տալ հոտ քաշելու (կաթեցնել թաշկինակի վրա կամ իր ձեռքի ափին 2—3 կաթիլ ու մոտեցնել հիվանդի քթին:

4. Կատարել արհեստական շնչառություն (տես նախկին գլուխանելը):

ՈԳՆՈՒԹՅՈՒՆ ԽԵՂԴՎՈՂԻՆ

1. Քաջալերել խեղդվողին, գոչելով՝ թե իսկույն կազատեն նրան թե հարկավոր է, վոր նա աշխատի ջրի լերեսին մնալ միայն 1-2 րոպե. Զգել խեղդվողին տախտակ, նստարան, սանդուխք, թռի, սանձ, վորպեսզի նա կարողանա մնալ ջրի լերեսին, բռնելով ալդ առարկաներից մեկնումնեկը:

2. Ոգնության համանողը պետք է մերկանա, իսկ լեթե ժամանակը չի ներում, գոնե պետք է հանի կոշիկները և վերեկի հագուստը, դուրս թողնի զրպանները և ներքն զցի, ներքնի մասում վարտիքի թելերը բացել:

3. Ազատողը պետք է չողա դեպի խեղդվողը լետեից, զգուշանալով, վոր նա չըսնի իր ձեռքից:

4. Բռնելով խեղդվողի մազերից, հագոստից կամ ուսից աղա-

տողը լողում ե մեջքի կամ կողքի վրա, աշխատելով վոտներով:

5. Յեթե խեղդվողը փորձի բռնել ազատողի վղից, ալդ դեպ քում հարկավոր ե անհապաղ սեղմել ձեռքով խեղդվողի քիթը և բերանը խև լերը խեղդվողն սկսի կորցնել ուշքը, իրենից քիչ հրետ նրան և ապա զրկել, ինչպես ասված ե 4-րդ կետում:

6. Խեղդվողի տեղը վորոշվում ե ողի պղպճակներով, վորոնք ժամանակ առժամանակ լերեսում են ջրի լերեսին:

ՈԳՆՈՒԹՅՈՒՆ ԶՐԻՑ ՀԱՆԱԾԻՆ

1. Հենց վոր խեղդվողին հանեցին ջրից, պետք ե շտամով բացել և հանել կամ կտրատել նրա թաց հագուստը,

2. Իսկույն պառկեցնել խեղդվողին փորի վրա դլանակի ձեռք

դարսած հագուստի կամ հագուստով ծածկած գերանի վրա և միքանի անդամ սեղմել ձեռքերով մեջքը:

Բացել խեղդվողի բերանը և ատամներն իրարուց հեռացնելը Մաքրել քիթը և բերանը փրփուրից, կեղտից և տիղմից՝ թաշկինակով ծածկված մատով:

4. Դուրս քաշել հիվանդի լեզուն, բայց հետեւ, վոր չմնասվի՞ Զի կարելի խեղդվողին տարութերել, այլ հարկավոր և գոյնել արհեստական շնչառություն (տես նախկին դլուխները).

3. Շփել տմբողջ մարմինը ձլունով, թրջած սառն լերեսսրբիչով, մինչև վոր մարմինը կղառնա ճկուն և կերկան կենդանության նշաններ:

4. Յերբ մարմինի վելջափորությունները կղառնան ճկուն, գործ գնել արհեստական շնչառություն (տես նախկին դլուխները):

5. Բնական շնչառությունը լերկալու դեպքում՝ թուլ ե տըր նիւթելի հիվանդին տեղափորել չափավոր տաքացրած սենյակում և անտեղ շարունակել մարմին շփումը շորի կտորով:

6. Տալ գրգոիչ կաթիլներ (եֆիր-վալերիանի):

ՈՒՆԻԹՅՈՒՆ ՍԱՌԱԾԻՆ

1. Զգուշությամբ տանել սառածին մի ծածկված ցուրտ շինություն (նախասենակ, սարալ).

2. Զգուշությամբ կտրատել ամբողջ հագուստը առանց քաշեցու այն:

ԱՐԵԳԱԿԱՅԻՆ ՑԵՎ ԶԵՐՄՈՒԹՅԱՆ ՀԱՐՎԱԾ

1. Դնել հիվանդին շվաքի տակ՝ գլուխը բարձր պահած (նկ. 19):

2. Մերկացնել և ջուր ցանել վրան, շփելով մարմինը թրջած շորով:



Նկ. 19

3. Շնչառության բացակալության ղեպքում՝ կիրառել արհեստական շնչառություն (տես նախկին գլուխները):
4. Յերբ հիվանդն ուշքի գա, տալ նրան զրգուիչ կաթիլներ:

ՈԳՆՈՒԹՅՈՒՆ ԿԱԽՎԵԼՈՒ ԴԵՐՔԱՒՄ

1. Գրկել կախվածի մարմինը, զգուշությամբ բռնելով և թույլ չտալով, վոր նա ընկնի, կարել թոկը:
2. Հանել վզից թոկը և խսկուն կիրառել արհեստական շնչառություն:

ԵՊԻԼԵՊՈՒԱ (ԸՆԿՆԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ)

1. Ուժով չդադարեցնել ջղաձգւ և թյունը:
2. Խնամել, վոր չնկնի և չվիրափորվի Զոքել հիվանդի գլխի մոտ, դնել նրա գլուխն իր ծնկների վրա և պահել (նկ. 20):



3. Բացել ոձիքը, թուլացնել հագուստը:
4. Աշխատել չանհանգստացնել հիվանդին և փորձեր չանել ուշքի բերելու:

**ԱՐՄՁԻՆ ՈԳՆՈՒԹՅՈՒՆՆ ԵԼԵԿՏՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԻՑ ՎՆԱՍՎԵԼՈՒ
ԴԵՐՔՈՒՄ**

1. Կանգնեցնել տոկը (ելեկտրական հոսանքը), ցած քաշելով ոռոբիլնիկը:
2. Ցեթե ոռոբիլնիկ չկտ, այն ժամանակ ողնության հասնողն անպատճառ ոեզինի կրկնակոշիկներ հաջած (առանց մետաղե տառերի) և ձեռնոցներով (կամ կարելի յե ձեռքերը փաթթաթել շորով) ելեքտրական թելից հեռացնում-քաշում են վնասվածին:
3. Կարելի յե կանգնեցնել տոկը, հեռացնելով վնասվածի վրա-

լից ելեկտրական թելը փայտով։ Դրա համար ողնությունն հասցնողը հագին պիտի ո նենա էրկնակոշիկներ (առանց սառերի) կամ կանգնած լինի թղթի (լրադրական) կապոցի վրա։

4. Յեթե ֆասվածը տոկը կանգնեցնելուց հետ գտնվի անզգա զրության մեջ և չշնչի, այդ գեղքում պետք ե համառորեն գործնել արհեստական շնչառություն։

ԱՅՐՎԱԾՔՆԵՐ

ՈԳՆՈՒԹՅՈՒՆ ԱՅՐՎԱԾՔ ՍՏԱՑԻՒՆ

1. Մարդու վրա այրվող հագուստը հանդցնելու համար ամենից լավ ե ձգել նրա վրա վերմակ, վերաբկու, մուշտակ և ալճա չետո այրվածի վրա ածել սառը ջուր։

2. Հագուստը և վոտնամանը հիվանդի վրաից չքաշել, այլ

և գուշությամբ հանել, կտրտելով մկրատով։ Մարմինն կպած հագուստի մասերը թողնել իրենց տեղը և միայն չորս բոլորը կտրտել մկրատով։

ՈԳՆՈՒԹՅՈՒՆ ԱՅՐՎԱԾՔՆԵՐԻ ԴԵՊՔՈՒՄ

1. Բոլոր այրվածքների ժամանակ,—կրակից թե լեռնան ջրից, —փաթաթել ֆասված տեղը բինտով կամ մաքուր շորով, վորոնց, լով կլինի, իմթե քավի վազելին, պըովանսալ կամ մաքուր կարագ լուղ։

2. Ուժեղ թթվուտով այրվելու դեպքում՝ թրջել այրված տեղը սողալի լուծվածքով, շաղախով, կրածրով կամ սապոնի ջրով և շաղ տալ վրան սողա, ատամի փոշի։

Ծծումբի բրգաւտով այրվելու դեպքում՝ յերեք չպես ե դիմել

ջրի ոգնության, այլ այրված տեղի վրա ածել սողա, ճարալ քանի բինակ ինչպէս առաջարկութեալ բինակ:

3. Ռւտիչ զալիքար (աշեռոչ) ալրվելու դեպքում՝ պետք լվանալ վերքը ջրախառն քացախով կամ կվասով:

4. Զհանգցրած կրից ալրվելու դեպքում՝ մեծ քանակութիւնում՝ պետք ե ջուր ածել:

Այս բոլոր ալրվածքների դեպքում՝ հիվանդներն առաջին ոգնութիւնունը ստանալուն պես՝ պիտի ուղարկվեն բժշկի մոտ:

ԱԶԲԵՐԻ ԱՅՐՎԱԾՔԸ

1. Աչքերի ալրվածքի դեպքում՝ անհրաժեշտ ե բինտով կամ մաքուր սորով փաթաթել աչքերը:



ՆԿ 21

Բինտի տռաջի ողակները տանել զլխի վրա, իսկ մրու ողակ-
յեվ փարարել բինտով (նկ 21):

ՈԳՆՈՒԹՅՈՒՆ ՍԱՌՈՒՑԻ ՃԵՂՔՎԱԾՔԻՑ ԶՐԻ ՄԵԶ ԸՆԿՆՈՂԻՆ

1. Ոգնություն հասցնողը պետք ե կանգնի հաստ, յերկար ոտքատակի վրա և ձգի մնասվածին թոկ կամ փալտ Ավելի հարմար ոգտվել սանդուղքից, վորի միջոցով նա կարող ե մոտենալ խեղդվողին:

2. Խեղդվողին ջրից հանելուց հետո առ զրգովիչ կաթիլեր (վալերիանի):

ՈԳՆՈՒԹՅՈՒՆ ԱԼԿՈԶՈՒԼԻՑ ԹՈՒԱՀԱՐՎԵԼՈՒ ԴԵՊՔՈՒՄ (արագից սամազոնից յեփայլո)

1. Դուրս բերել թունավորածին թարմ ողլը Բացել հագուտը:
2. Սառը ջուր ածել վրան:

3. Խմեցնել՝ կես բաժակ ջրի հետ 5 կտթիլ նաշտղիրի սպիրու:
4. Շնչառության բացակալության գեղքում գործ դնել արհեստական շնչառություն (տես նախկին գլուխները):

ՈԳՆՈՒԹՅՈՒՆ ՍՈՒՆԿԻՑ ԹՈՒՆՎՈՐՎԵԼՈՒ ԴԵՊՔՈՒՄ

1. Տալ փսխեցնող և լուծողական գեղ:
 2. Տաքացնել մարմինը:
 3. Տալ զբուիչ կտթիլներ (վալերիանի կամ հոֆմանի 10—20 կտթիլ կես ըլումկա ջրի մեջ):
- Բացախ չտալ:

ԿԱՏԱՂԱԾ ԿԵՆԴԱՆԻՆԵՐԻ ԿԾԵԼՈՒ ԴԵՊՔՈՒՄ

1. Կապիկ վերքը:
 2. Իսկուն հիվանդին ուղարկել բժշկի մոտ՝ վորը նրան կռւղարկի պատվաստման (պաստերյան) կայանը:
- Կատաղած կենդանիներից մնասվածներն իրավունք են ստանում ճանապարհի ծախսը չվճարելու:

ՄԵՂՎԻ ԽԱՅԹՈՑԸ

1. Հեռացնել թունը (խալթը, ասեղը):
2. Խալթած տեղի վրա ածել 1—3 կտթիլ նաշտղիրի սպիրու:
3. Դնել խալթած տեղի վրա ստոր թրջոց 2—3 ժամվա լնթացքում, փոխելով թրջոցը լուրաքանչյուր 5—10 բոպելում:

ՈՉԻ ԽԱՅԹՈՑԸ

1. Իսկուն կտպել մարմի վերջավորությունը սեղմանով՝ վերքեց բարձր (սրտին մոտիկ):
2. Այրել վերքը շիկացած ածուխով կտմ յերկաթով (մեխով), վորից հետո կտպն արձակել:
- Հիվանդին անհապաղ ուղարկել բժշկի մոտ:

ԱՌԱՋԻՆ ՈԳՆՈՒԹՅՈՒՆ ԹՈՒՆԱՎՈՐՈՂ ՆՅՈՒԹԵՐԻՑ ՎՆԱՍՎԵԼՈՒ
ԴԵՐՔՈՒՄ

1. Թունավորողն լութերից մնասսվածին իսկուն պետք ե հեռացնել թունավորած մթնոլորտից և տանել մաքուր ողի մեջ: Ոզնությունն հասցնողն այդ գեղքում պետք ե ունենա հակագաղալին դիմակ:

2. Յեթե թունավորվածը չի կարող արագությամբ հեռացվել թունավոր մթնոլորտից, ապա նրան շամենից առաջ պիտի հազցնել հակագաղալին դիմակ (նկ 22):

3. Յեթե դիմակ չկա, այդ գեղքում թունավորվածի քիթը և բերանը ծածկում են թրջած լերեսորբիչով, շապկով և ալուն, և ստիպում, վոր նա շնչի թաց շորի միջով:

4. Յեթե հոսուն թունավորող նյութի կաթիլները (որինտկ' իպրիտի) ընկել են հագուստի կամ մարմի բաց մասերի վրա, — հագուստը պետք ե հանել, աշխատելով չկպչել նրան բաց ձեռքերով, իսկ կաշվի վրաին կաթիլները հեռացնել փալտիկի ծալրին փաթաթած բամբակով (ինչպես հեռացնում են թանաքի կաթելները, ալսինքն՝ վոչ թե քսմսելով, ալ փոխադրելով բամբակը փալտի վրա ամեն անգամ կաթիլին դիպչելուց հետո): Մաքրելով կաշին թունավորող նյութի կաթիլից, հարկավոր ե խնամքով լվանալ մնաս-



Նկ. 22

ված տեղը տաք
ջրով և սապոնով
մի քանի անգամ։
Եթե ձեռքի տակ
կա բենզին կամ կե-
րոսին, ալդ դեպքում
լվանալուց առաջ մի
քանի անգամ շփում
են մնասված տեղը
բենզինով կամ նազ-
թով լավ թրչած
բամբակով (նկ 23)։

**Մնալուն թու-
նավորող նյութերից**

Նկ. 23



վասավածներին պետք ե ոգնության գալ հակադաղալին դիմակով և
ռեզինի ձեռնոցներով, իսկ ավելի լավ ե ունենալ հատուկ պաշտ-
պանող-ապահովող զգեստ:

5. Հեղձուցիչ գաղերով թունավորվածներին ոգնելու դեպքում՝
նրանց չեն թույլ տալիս ինքնագլուխ լերթալ և ուժեղ շարժումներ
անել: Նրանց տանում են մոտիկ հիվանդանոցը կամ բուժարանը
ձեռքերի վրա, պատզարակով, կամ հանգիստ կտռքով:

6. Արհեստական ջնչառություն կիրառում են միայն ուշաթափ
դրության մեջ գտնվողներին, ցիանով թունավորվածներին (լեղակի
թթվուտով, վոր դառն նշի հոտ ունի) և ուգարով բռնվածներին:

Հեղձուցիչ նյութերից թունավորվածների վերաբերմամբ ար-
հեստական ջնչառություն չի թույլատրվում:

7. Թունավորող նյութերից վասավածներին ոգնելիս՝ պիտի հի-
շել, վոր թունավորումը լերբեմն արտահայտվում ե վոչ միանգամից,



Նկ. 24


ալ մի քանի ժամ անցնելուց հետո: Վորպեսզի թունտվորման զարգացման առաջն առնվի, բոլոր դեպքերում ոգնություն հասցնելիս պետք է գործել արագությամբ ու վճռականապես:

8. Թունավորող նյութերի մթնողորտով վարակված հագուստը պահում ե (կլանում ե) իր մեջ թունավորող նյութ և կարող ե վարակման պատճառ լինել: Փակ շինություն մտնելիս՝ այդ աեսակ հագուստը նախապես պետք է հանել: Առանձին զգուշությամբ պետք ե վերաբերվել այն հագուստներին, վորոնք ունեն իրենց մեջ մարդուն թունավորող նյութ (իպրիտ) և թուլլ չտալ հագնել այն մինչև վոր ապագագացման (դեգազացա) չենթարկվի:

9. Հագուստի ապագագացումը կատարվում ե յեռացնելով ջրի մեջ մի ժամ և կամ մաքրելով առանձին սենյակում (ռամեր), վորտեղ տանում են այդ հագուստն ոլիքով շաղախած բրեզենտի հատուկ պարկերում կամ մետաղի արկղում, վոր ունի ամուր ծածկող կտփարիչ:

Վոտնամանն ապագագացվում ե խլորալին կիր քսելով վրան: 10. Մնայուն թունավորող նյութերից թունավորվածներին հասցրած առաջին ոգնությունից անկախ, վարակված մթնոլորտում գտնվող բոլոր մարդիկ խսկույն պետք ե հանեն հագուստը և լավ լվացվեն տաք ջրով և սապոնով: Ամենից հարմար ե ալդ տեսակ լվացման համար ոգտվեն լողարանալին ցնցուղով (դյաշ): Մանտվանդ խնամքով պետք ե լվանալ մաշալկալով կոնատակերը և աճունքը (ուս) (նկ. 25):

11. Թունավորող նյութերն աչքերի վրա ազդելիս՝ պետք ե լվանալ աչքերը սողալի թուլլ ($2^0/_{\circ}$) շաղախով: Նույն լուծվածքով պետք ե մի քանի անգամ ($15-20$) վողողել բերանը և կոկորդը: Ցանկալի լե լրացնել այդ վողողումը՝ ներս շնչելով 3—5 ըոպելի ընթացքում սողալի $2^0/_{\circ}$ լուծվածքի գոլորշին: Վորին ավելացնում



Նկ. 25

են 2—3 կտթիլ մլատալի լուղ կամ մենտոլի բյուրեղ:
Գոլորշուներչնչելը նպատակահարմար ե կատարել առանձին
դործիքով, վոր կոչվում ե ինգալիտառոր:

12. Հեղձուցիչ նյութերից մսասվածները, բացի հանգստու-
թլունից, կարիք են զգում նաև տաքանալուներչնչելու թթվածին
վորը սովորաբար տալիս են նրանց թթվածնի բարձիկներից՝ լուրա-
քանչլուր 5—8 րոպեն մի անգամ 2—3 րոպեխով:

13. Տաքացնում են հեղձուցիչ թունտվորող նյութերից վա-
րակվածներին, նրանց փաթաթելով տաք վերմակների մեջ, տեղա-
փորելով ողը մաքրած տաք սենյակներում և շրջապատելով տաք
ջրով լցրած շներով և ռեզինի պարկով:

14. Զի կարելի թուլլատրել ոգտվելու թունտվորված մթնոլոր-
տում գտնված ջրից, պարենից և կերակրից: Այն բոլոր տուարկա-
ները, վորոնց վրա ընկել ե մնալուն թունտվորաղ նյութ, պետք ե

լենթարկվեն ապագազացման՝ մետաղիս իրերը լվացվեն կերոսինով,
իսկ մլուսները—խլորալին կրով։ Թունավորված պարենը և առար-
կաները, վորոնց անհնար և ապագազացման լենթարկել, պետք և
փոշնչացվեն։

15. Ոգնություն հասցնելով մասսվածներին՝ պետք է միջոցներ
ձեռք առնել թուլլ չտալու հակագազային դիմակ ու հատուկ զգեստ
շունեցողներին ներս մտնել թունավորված շինությունը և մնալուն
թունավորող նյութերով վողողված տեղերը։

Մոտակա բժշկի կամ բուժաբանի հասցեն

Մոտակա հիվանդանոցի հասցեն

Մոտակա ամբուլատորիալի հասցեն

ԲՈՎԱՆԴԱԿԱԽԹՅՈՒՆ

Հիմական կանոնները, վոր պետք և կտարել առաջին ոդնություն	3
հասցնելիս	
Արյունահոսություն թշից կամ ըլր- թունքից	5
Արյունահոսություն քթից	6
Արյունահոսություն կռնատակից և անրակի տակից	7
Արյունահոսություն մեջքից կամ կրծքից	8
Արյունահոսություն ձեռքի գաստակից	10
Արյունահոսություն նախաբազուկից	11
Արյունահոսություն ուռոց	13
Արյունահոսություն կրունկից կամ փոտատակից	14
Արյունահոսություն սրունքից	14
Արյունահոսություն ազդրից	16
Արյունահոսություն ականջից	18
Գոսկորների կոտրվելը	20

b2


Ոգնություն նախաբազուկը կոտըր- վելու դեպքում	20
Ոգնություն ուսու ջարդվելու դեպ- քում	23
Սըունքի ջարդվածքը	24
Ազդրի ջարդվածքը	25
Ներքելի ճնոտի ջարդվածքը	28
Անրակի ջարդվածքը	28
Կողերի ջարդվածքը	30
Վատկորը զուրս ընկնելու նշանները	30
Առաջին ոգնություն փոսկորը դուրս ընկնելու դեպքում	31
Վնասվածի տեղափոխությունը	31
Ինչպես պետք և բարձրացնել հի- վանդին և տեղափորել պատգա- րակի վրա և ինչպես պատգարա- կից տեղափոխել ամհճակալի վրա	32
Պատգարակի վրա պանելու յեղանակը	33

b3

Վնասվածին տանելու այլ յեղա- նակներ	35
Մահվան նշանները	38
Ոգնություն կարծեցյալ մահվան դեպքում	39
Արհեստական չնչառության առաջին ձեր (ըստ Սիլվիստրի)	41
Արհեստական չնչառության յերկ- րորդ ձեր (ըստ Շեֆֆերի)	43
Ոգնություն ուժագնացության դեպ- քում	47
Ոգնություն ուղարով բռնվելու դեպ- քում	49
Ոգնություն խեղդվողին	50
Ռդնություն ջրից հանածին	51
Ոգնություն սառածին	52
Արեգակյին ու ջերմության հար- ված	53
Ոգնություն կախվելու դեպքում . .	55

b4

Եղիլեպսիա (ընկնավորություն)	55
Առաջին ոգնությունը ելեկտրակա- նությունից վասակելու դեպքում	57
ԱՅՐՎԱԾՔՆԵՐ	
Ոգնություն այրվածք ստացածին .	58
Ոգնություն այրվածքների դեպքում	59
Աչքերի այրվածքը	60
Ոգնություն սառուցյի ձեղքածերից ջրի մեջ ընկնողին	61
Ոգնություն ալկոհոլից թունավոր- վելու դեպքում	61
Ոգնություն սունկից թունավորվե- լու դեպքում	62
Կատաղած կենդանիների կծելու դեպքում	63
Մեղքի խայթոցի	63
Ոձի խայթոցը	64
Առաջին ոգնություն թունավորող նյութերից վասակելու դեպքում .	64



ՀՀ Ազգային գրադարան



NL0270176

3393

Чище 75 ч.

877

Н. С. Берлих

Первая помощь при нечастных случаях и отравлениях

Под ред. С.Р. Арианиш (Изд. пятидесятое)

Февраль 1988